

ֆակել եւ խանգարել. վասն որոյ մեք այնպիսի հայրապետ եւ եպիսկոպոս, առաջնորդ եւ նուիրակ չեմք ընդունիր»:

Եւ որպէսզի այս քննադատութիւնները բոլորովին անօգուտ չանցնին՝ անիկա կը ներկայացնէ պայժաններ, «քե կամիս որ ընդունիցեմք զքեզ եւ հնազանդեմք հրամանի քո, զայն առաջին անկարգութիւնսն զորս գրեցաք, զայն չար սովորութիւնսն բարձ ի քեզ եւ ըստ աստուածային օրինացն եւ կանոնաց շաւղացն գնա», և կը յանձնարարէ որ.

Ա. Մէկ թեմի մը վրայ միայն մէկ եպիսկոպոս ձեռնադրէ:

Բ. Նուիրակաները հրահանգէ որ բանագրանքներէ զգուշանան:

Գ. Սրբոց նշխարները եւ Լուսաւորչի Ս. Աջը դարձնէ էջմիածին:

Դ. Եթէ ստոյգ է որ պապին գիր չէ գըրած, գիրով մը հերքէ:

Ե. Զաքարիա վանեցին բանադրէ իբր խարդախող պապին տրուած գիրին և ասիկա շրջաբերականով մը հաղորդէ:

Եւ գիրը կը վերջացնէ սա սպառնական բառերով. «քե զայս առնես՝ կու ընդունիմք զքեզ որպէս զուղղափառ կաթողիկոս եւ քե ոչ, դու գիտես»: